№ 278 ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15 1901 ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15 № 278

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ. Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

(30-ՐԴ ՏԱՐԻ)

ՅՌԱՋԻԿԱԾ 1902 ԹՒԱԿԱՆԻ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ ԱՄԵՆ օր բացի տօներին յաջորդող օրերից.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 բուբլի է, տան եւ մէկ եւ տան ամավանը՝ 9 ր., ինն եւ ութ ամավանը՝ 8 ր., եօթ ամավանը՝ 7 ր., վեց ամավանը՝ 6 ր., հինգ ամավանը՝ 5 ր., չորս ամավանը՝ 4 ր., երեք ամավանը՝ 3 ր., երկու ամավանը՝ 2 ր. եւ մի ամավանը՝ 1 բուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 7 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները 10 բուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա եւ Բարօնսկայա փողոցների անկիւն) իսկ ԲԱԳԻՈՒՄ Ն. Դաւթեանի մօտ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է դիտել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Եղիսաբէթ Քրիստափորեան Սարգսեանց եւ Աստուածատուր Գէորգեան Վաչեանց սրտի ցաւով յայտնում են, առաջինը իր դուստր, երկրորդը իր ամուսին

ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ ՊՕՂՈՍԵԱՆ ՎԱՉԵԱՆՑԻ

վաղաժամ մահը։ Թաղումը տեղի կունենայ Բագումի, կիրակի, դեկտեմբերի 16-ին։

1—2

Տիգրանակերտցի Պօղոս եւ Գեարոս Շէկոյեան-Բրուտեան եղբայրները՝ ցաւօք սրտի յայտնում են իրանց հայրենակիցներին եւ ծանօթներին, որ իրանց բազմավիշտ հօր.

ԲՐՈՒՏ ՎԱՐՊԵՏ ՇԷԿՈՅԻ

մահվան (որ տեղի է ունեցել նոյեմբերի 7-ին, հայրենի երկրում—Տիգրանակերտ քաղաքում) քառասնօրեայ կարգն ու հոգեհանգիստը տեղի կունենայ Մոսկվայի գերեզմանատան եկեղեցում, կիրակի օր, դեկտեմբերի 16-ին։ Պատարագի սկիզբն է առաւօտեան 10½ ժամին։

1—1

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼՕՆԴՕՆԻ ԿԵԱՆՔԻՑ

(Իմ տպաւորութիւնները)

—

Խօսելով Լօնդօնի մասին *), մենք առիթ ենք ունեցել մատնանիշ անելու, շեշտելու այն արիւթիւնը, այն յուսահատ տաղտկութիւնը, որ տիրում է բրիտանական մայրաքաղաքում կիրակի օրը։ Լօնդօնի սովորական հզօր շարժումը, որոտընդոստ դղրդիւնը, նրա աշխոյժ, կենդանի գործունէութիւնը այդ օրը, մի գերբնական ոյժի զօրութեամբ, յանկարծ տեղի է տալիս անշարժութեան, խորին խաղաղութեան, մեռելային ամայութեան, որ այն վիթխարի, անհուն քաղաքում մարդուն ճնշում, խեղդում է։ Միակ ելքը, միակ մխիթարութիւնը բազմաթիւ միտինգներն են, որ տեղի են ունենում Լօնդօնի զանազան կէտերում։

Դուցէ ոչ մի երկրում հասարակական կարծիքը չունի այն կշիռը, այն նշանակութիւնը եւ չէ խաղում այն դերը, որպիսին յատկացրված է Անգլիայում։ Այդ կարծիքը կրթող, այս կամ այն ուղղութիւն տուող ֆակտորների թւում առաջին տեղը մասուլից յետոյ բռնում են միտինգները։ Չը կայ քաղաքական եւ հասարակական ոչ մի խնդիր, որ միտինգների նիւթ չը դառնար, բազմակողմանի քննութեան չենթարկվէր թէ մասուլի էջերում եւ թէ միտինգներում։ Որպէս դժուար է երեւակայել անգլիացուն առանց լրագրի, նոյնպէս անհնար է երեւակայել նրան առանց միտինգների։ Մամուլ եւ միտինգներ,—ահա այն չկօլան, այն հնոցը, որի բովով անցնելով՝ կռում, կոփվում, կրթվում, պատրաստվում է մի ամբողջ ժողովուրդ։

Անգլիական ատհամադրութեան ոչ մի օրէնք չէ արգելում երկու-երեք հոգու ժողովվել միասին եւ խօսել՝ ինչի մասին կամենան։ Ինչ որ թոյլ է տրվում երեք մարդու, նոյնն է եւ հինգ, քսան, հազար, 10,000, 100,000-ի... Նկատմամբ։ Կարող են այդ անձինք ժողովվել՝ երբ եւ ուր որ կամենան։ Կարող են նրանք խօսել, ճառել, վիճել՝ ինչ նիւթի մասին էլ ցանկանան, թէկուզ պարլամենտի լինելու չը լինելու մասին։ Ոչ ոք, ոչ ոստիկանութիւնը, ոչ նոյն պարլամէնտը, ոչ դատարանը իրաւունք չունեն միջամտելու կամ արգելելու։ «Փրկչեան» բանակը Լօնդօնում մի միտինգ պիտի ունենար։ Նրան հակառակ «Կամաք» կոչված բանակը յայտարարում է, որ պիտի խանգարէ եւ ցրվէ այդ միտինգը։ Ոստիկանութիւնը՝ երկիւղ կրելով գալիք անկարգութիւններից, արգելք է դնում։ Փրկչեանները՝ անտես անելով այդ արգելքը, մեծ հանդիսով դուրս են գալիս միտինգի։ Քաղաքային վարչութիւնը՝ նրանց յանցաւոր ճանաչելով, մեղադրական վճիռ է կայացնում։ Գործը ընկնում է դատարան, որ անմիջապէս բեկանում է այդ վճիռը, յայտարարելով թէ «Կամաք» բանակի ոստիկանութիւնը իրաւունք չէ տալիս ոստիկանութեան միջամտելու։ Այդպիսով միտինգների, ազատ խօսքի իրաւունքը ստուգ է եւ անխախտելի։

Միտինգները սովորաբար տեղի են ունենում հասարակական այգիներում եւ հրապարակների վրա։ Կիրակնօրեայ տաղտկութիւնը սպանելու համար լօնդօնցիները չատպում են գտնէ մի քանի ժամով ձգել ծխից սեւացած ախուր աները, ծառերից բոլորովին զուրկ նեղ, միօրինակ փողոցները եւ գնալ դէպի լոյս, դէպի մաքուր օդ, դէպի կանաչով ծածկված, խիտ եւ բարձր ծառերով զարդարված Հրաչեայ այգիները, լայնատարած, անսահման պարկերը։ Ժողովուրդը այդտեղ վխտում է։ Նա ներկայ է լինում բազմաթիւ միտինգների։ Նրանք այնքան շատ են, որ մարդ չը գիտէ՝ որին գնայ։ Մեծ՝ mass-միտինգները տեղի են ունենում եւ շաբաթվայ ընթացքում, դրանց մասին թերթերում վաղօրօք յայտարարվում է։

Հետաքրքիր է՝ թէ ինչպէս են կազմվում առանց վաղօրօք յայտարարութիւնների, այսպէս ասած, էքսպրոմտ-միտինգները։ Միտինգ կազմողը ընտրում է պարկի մի յարմար կէտ. դնում է այնտեղ իր ամբիոնը։ Նրա մօտ դեռ ոչ ոք չը կայ, հազիւ երկու-երեք հոգի։ Բայց չը նայած՝ նա ամբիոն է բարձրանում, եւ՝ դիմելով երեք անձից բաղկացած հասարակութեան, սկսում է իր ճառը։ Նա, կարծես մոռանալով իր երեք ունկնդիրներին, իրան երեւակայում է մի մեծ միտինգում եւ ոգեւորված ճառում է։ Զբօսնող հասարակութիւնը կամաց-կամաց հաւաքվում է այդ ամբիոնի շուրջը։ Ատենաբանը առանց փոխելու իր ձայնի ինտօնացիան, իր շարժումները՝ խաղաղ, անվրդով շարունակում է։ Եթէ նրա խօսքը ուժեղ է, կարողանում է զզուել, ապաւորութիւն գործել, հետաքրքրել ունկնդիրներին, որոնց թիւը բոլորովին առ բոլորովին շատանում, աւելանում է։ Նրանք ուշադրութիւնները լարած հետեւում են ատենաբանին։ «Hear, hear! (լսեցէք, լսեցէք) լսվում են երբեմն հասարակութեան միջից։ Միտինգ կազմողը, վերջացնելով իր ասելիքը, առաջարկում է օպպոնենտ ունկնդիրներին իրան պատասխանել։ Ցանկացողը, խօսք խնդրելով, պատասխանում է։ Նրան հետեւում է ատենաբանի ոգեւորված ռէպլիկան։ Այդ վիճաբանութիւնների ժամանակ ձեր ուշադրութիւնը գրաւում է մանաւանդ մի հանգամանք։ Դա անգլիացու սառնարիւնութիւնն է, որով նա հանդարտ, խաղաղ, անվրդով լսում է իր հակառակորդին, որը՝ երբեմն նուրբ սրամտութիւններով համեմելով իր ասելիքը, աշխատում է ջրել, ապալել ատենաբանի թէզը։ Սա միայն ժպտում է՝ ասելով. «լաւ, լաւ. շարունակեցէք»։ Դուցէ այդ օպպոնենտը բոլոր ունկնդիրների մէջ միակն է եւ հասարակութիւնը բոլորովին համամիտ է ատենաբանի հետ. բայց ոչ օքի մաքօվն անգամ չէ անցնում կանգնեցնել այն մէկին, խանգարել նրան։ Անգլիացին գիտէ յարգել իւրաքանչիւր կարծիք, թող դա լինի իրանին հակառակ, նոյն իսկ անհեթեթութիւն։

Կիրակնօրեայ միտինգների մի ամբողջ կէսը

*) «Մշակ», 1899 թ. № 193.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մշակական հոգատարութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Դատաստանական դահլիճից. Ռուսաց ներկայացուցիչները. Նամակ Ղզլարից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գարսկատանից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԾԱՆՈՒՑՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱՅԱՆ. Լօնդօնի կեանքից։

ՄՇՏԱԿԱՆ ՀՈԳԱՏԱՐՈՒԹԻՒՆ

—

Երբ մեր հասարակութեան առաջ հանդէս եկաւ երկրաշարժի նման մի սոսկալի աղէտի աւերմունքը Ախալքալաքի գաւառում, հասարակութիւնը սթափվեց, զգացվեց եւ միացաւ՝ ընդհանուր օգնութիւն հասցնելու նպատակով։ Նոյնը տեղի ունեցաւ, երբ երկրաշարժի շրջանը ենթարկվեց սարսափելի անբերրիութեան։ Հասարակութիւնը միայն «Մշակ» լրագրի միջոցով ժողովեց 40,000 բուբլուց աւելի մի գումար կարօտեալներին օգնելու համար եւ այդպիսով ցոյց տուեց, որ նա, բացի մասնաւոր շահերից, ընդունում է եւ մի կապ հեռու տեղերում ապրողների մէջ։

Հասարակութիւնը ցոյց տուեց ընդհանուր զգացմունքներ, ընդհանուր ուրախութիւն եւ ընդհանուր յուսակցութիւններ, երբ տեղի ունեցան այնպիսի դէպքեր, ինչպէս էին Մխիթարեանների երկհարիւրամեայ գործունէութեան յօբելեանը, «Պէպօի» պիեսի յօբելեանը, Գամառ-Քաթիպայի մահարձանի բացումը, Ջանշանի, Լորէն Ստեփանեի, Ղեւոնդ Ալիշանի մահը եւ մի քանի ուրիշ խոշոր դէպքեր։ Հասարակութիւնը մի բոպէ շարժվեց, ցոյց տուեց արթնութեան եւ ընդհանուր զգացմունքների նշաններ եւ դարձեալ ընկղմվեց իր սովորական թմրութեան մէջ։

Եթէ այդ խոշոր առիթները երբեմնապէս չը դրդէին մեր հասարակութիւնը յուզվելու եւ միմեանց հետ մտքի եւ զգացմունքի փոխանակութիւն ունենալու, մեծ կասկածի մէջ պէտք է լինէինք, թէ արդեօք գոյութիւն ունի՞ հասարակական մտածողութեան եւ զգացողութեան մի որ եւ է նշոյլ մեր մէջ։

Մեր սովորական կեանքը շատ քիչ ապացոյցներ է տալիս այն բանի, որ մենք կազմում ենք գիտակցական հասարակութիւն եւ ունենք հասարակական լուրջ հոգսեր ու խնդիրներ։ Մենք շատ քիչ բան ենք իրագործել կեանքի մէջ, որ կրէ լայն կուլտուրական առաջադիմութեան կնիք իր վրա. ցրված, բաժանված ոյժերով, զբաղված մասնաւոր շահերով մենք չենք ճոխացրել մեր կեանքը բազմաթիւ կուլտուրական գործերով եւ հիմնարկութիւններով։ Այդ է պատճառը, որ մենք անկարող ենք արագ կերպով առաջ ընթանալ եւ իրականութեան մէջ մենք օր օրի վրա ոչ թէ միմեանց չենք նպաստում եւ աջակցում ընդհանուր կուլտուրան բարձրացնելու համար, այլ, ընդհակառակը, կարծես ուրախանում ենք, երբ մի որ եւ է օգտաւէտ ծրագիր չէ աջողվում եւ կործանվում է։

Այն մխիթարական զգացմունքը, որ երբեմնապէս հանդէս է գալիս խոշոր դէպքերի ժամանակ, թող դառնայ կանոնաւոր եւ սովորական մի յատկութիւն մեզ համար, որով մենք ղեկավարվենք մեր առօրեայ կեանքում եւ այդպիսով հարթենք մեր առաջադիմութեան ճանապարհը, որը դեռ շատ եւ շատ անմշակ եւ անյարմար է։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ,

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

(Շարունակութիւն)

—

Վկայ Ղուլեան (քաղաքային վարչութեան շինարարական բաժնի գործավար) բացատրում է, որ շինարարական բաժինը ծանրաբեռնված էր հազար ու մի զանազանատեսակ գործերով, որ երբեմն ֆիզիկապէս անհնար էր հասցնել ժամանակին։ Սակայն մեղադրեալ Վերմիշեանի օրով այդ բաժնի գործավարութիւնը բարւոքվեց։ Վերմիշեանը յաճախ, տեսնելով, որ ինքը (վկան) չէ հասցնում գործերը, նստում էր եւ օգնում նրան։ Վերմիշեանը մի քանի հաշուապահական նոր գրքեր մտցրեց շինարարական բաժնում։ Նա յաճախ ստիպված էր լինում գնալ անճաշ եւ ժամերով մնալ այնտեղ քաղաքային ջրանցքի գործերը կարգի բերելու համար։ Այդ ջրանցքի գործը Վերմիշեանի օրով բարւոքվեց։

Վկայ Թայիրեան (դուժայի ձայնաւոր), որ

եղել է բիւջէտային յանձնաժողովի անդամ, առում է, որ յանձնաժողովը առաջարկում էր աւելացնել Երեւանեան հրապարակի վրա գտնվող քաղաքապատկան խանութների վարձագինը, գտնելով, որ այդ խանութները աւելի պակաս գնով են վարձով տրված, քան մօտակայ ժամանակաւոր խանութները, օրինակ իրան, վկային պատկանող խանութները։ Մեղադրելով հարցին, թէ արդեօք վկային պատկանող խանութները եւ քաղաքապատկան խանութները միատեսակ են եւ հաւասար յարմարութիւններ ունեն, վկան պատասխանում է, որ դատական քննիչին ցուցմունք տալուց յետոյ ինքը յատկապէս այդ նպատակով նորից գնել է այդ խանութները, եւ հաստատվել է, որ քաղաքապատկան խանութները աւելի քիչ յարմարութիւններ ունեն (օրինակ, լեռեւի բաժանմունքները մութ են), ուստի եւ բնականաբար պէտք է աւելի պակաս գնով վարձու տրվէին։

Պատասխանելով իշխ. ԱրղուԹեանի եւ նրա փաստաբան Տելէնկոյի հարցերին, վկան ասում է, որ մեղադրեալ իշխ. ԱրղուԹեանի նրման իր պարտականութիւններին եռանդուն կերպով ու սիրով վերաբերվող գործիչներ հազուագիւտ են. իբրեւ ապացոյց իր ասածին, վկան թւում է քաղաքային հաստատութիւնների մի ամբողջ շարք, որոնք հիմնվել են իշխ. ԱրղուԹեանի նախաձեռնութեամբ ու եռանդուն մասնակցութեամբ, եւ նրա կողմից բազմաթիւ փայլուն զեկուցումները քաղաքային անտեսութեան զանազան հարցերի վերաբերմամբ։ Անցնելով մեղադրեալ Վերմիշեանի գործունէութեան բնորոշման, վկան ասում է, որ Վերմիշեանի անխոնջ գործունէութիւնը զարմացնում էր նոյն իսկ հինաւուրց ձայնաւորներին, որոնք տեսել են քաղաքային վարչութեան բազմաթիւ կացմեր։ Վկան հաստատում է, որ երբ դումայում առաջին անգամ հարց բարձրացաւ ձիաքարշը յետ գնելու մասին, ձայնաւորներից շատերը համարում էին այդ բանը ՁԼասակար՝ քաղաքային եկամուտների տեսակէտից, բայց երբ մեղադրեալ Վերմիշեան վերին ատիճանի հիմնաւոր եւ մանրամասն ուսումնասիրութիւնից յետոյ ներկայացրեց դումային իր զեկուցումը այդ հարցի մասին, ամենքը համոզվեցին այդ գործի շահաւետութեան մէջ։ Շնորհիւ այդ հանգամանքի, ձիաքարշը չահագործող անօնիմ ընկերութիւնը ստիպված եղաւ այդ չահագործութեան թոյլատրութեան համար քաղաքին տալ տարեկան 50 հազար ռուբլի, մինչդեռ առաջ մի չնչին գումար էր առաջարկում այդ ընկերութիւնը քաղաքին։ Վկան հաստատված է, որ քաղաքը այժմ տարեկան այդ 50 հազար ռուբլի գումարը ստանում է Վերմիշեանի շնորհիւ։

Մեղադրեալ Իվանենկո, որ ալեզարդ ծերունի է, եւ երկար տարիներ եղել է գիմնազիայի տեսուչ, հարցնում է վկային. «Ասացէք խընդրեմ, վկայ, դուք ընտրեցիք քաղաքային վարչութեան նախկին անդամ իշխ. ԱրղուԹեանի եւ Վերմիշեանի գործունէութիւնը, իսկ ինչ կարող էք ասել իմ գործունէութեան մասին»։

Վկայ Թայիրեան պատասխանում է. «Ձեր մասին կարող եմ ասել, որ դուք այնքան գործունեայ էիք, որ մենք բոլորս, ձեր նախկին աշակերտներս, զարմանում էինք, տեսնելով որ դուք անխոնջ աշխատում էք վաղ առաւօտվանից մինչեւ ժամի 4-ը»։

Այնուհետեւ սկսվեց մեղադրեալների կողմից կանչված վկաների հարց ու փորձը։

(Կը շարունակվի

ՌՈՒՍԱՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ

—

Հինգշաբթի, դեկտեմբերի 18-ին, ռուս դրամատիքական խումբը՝ պ. Բօքէրա Ադէլհայմի բէնէֆիսին՝ ներկայացրեց Շէքսպիրի «Համլէտ»։

Բէնէֆիցիանտը կատարում էր դանիական պրինցի դերը։ Պարոնի խաղն ընդհանրապէս չէր Թողնում այն ուժեղ, մագնիսացնող տպաւորութիւնը, որ հանդիսականները սովորաբար մի ինքնահաճ յամառութեամբ եւ յաճախ անբացատրելի պահանջկոտութեամբ սպասում են ամեն մի առաջնակարգ դերասանից։ Նրա խաղը չունէր այն կախարդանքը, այն տարերային զօրութիւնը, որի աղբիւրն իսկական հանճարն է։ Մեղ թւում է սակայն, որ պ. Ադէլհայմն այնքան խելօք, ինքնաքննադատութեան մէջ այնքան անաչառ պէտք է գտնվի, որ յաւակնութիւն անգամ չի ունենայ իրան մի դերասանական հանճար, մասնաւորապէս մի առաջնակարգ Համլէտ համարել։ Նա մի աչքի ընկնող տաղանդ է, որ գիտէ դէպի իր պատասխանատու դերերը միանգամայն գիտակցաբար վերաբերվել, խոր կերպով ուսումնասիրել, ամենանուրբ մանրամասնութիւններով իրացնել եւ շատ անգամ իր ստեղծագործող ոյժի բովիցն անցկացնել։

Պ. Ադէլհայմի Համլէտը կրում էր իր այս բոլոր յատկութիւնների կնիքը։ Նրա խաղի սրինակելի առաւելութիւններից մէկը չափաւորութիւնն էր։ Ֆրանսիայի նշանաւոր դերասան Կոկլէն, եթէ չենք սխալվում, իր նամակներից մէկում՝ գրում է մօտաւորապէս հետեւեալը. «Այն դերասանը, որ բեմի վրայից կարծում է թէ հասարակութեան համար է խաղում—նա մի խելագար է»։ Թէ որքան ճիշդ են եւ արդեօք չափազանցութիւն չեն այս խօսքերը—սա մենք մտադիր չենք քրքրել. սակայն միայն կը նկատենք, որ այդ նշանակալից խօսքերը ամեն մի լուրջ դերասանի ուշադրութեան պէտք է արժանանան։ Պալով պ. Ադէլհայմին՝ պէտք է խոստովանել, որ նա ոչ միայն խոյս էր տալիս էֆֆէկտներից, արտաքուստ ապաւորութիւն թողնելու հակումից—մի գիծ, ոչ պարոնի Օսէլլոյում, դիցուք, այնքան որոշ եւ հետեւողական կերպով չէր նշված—այլ եւ երբեմն այնքան կենտրոնանում, այնքան ինքնամփոփ էր դառնում, որ յիրաւի կարծես բոլորովին մոռանում էր, թէ իրան դիտում է հանդիսականների մի խուռն բազմութիւն։ Միւս կողմից նա իրան միանգամայն հեռու էր պահում օտարոտի երեւալու ձգտումից՝ առանց տակայն ինքնուրոյն լինելու հակումը զոհելու։

Պարոնի խաղը մեզ վրա ամենալաւ տպաւորութիւն թողեց երրորդ գործողութեան վերջին տեսարանում՝ մօր հետ բացատրվելիս. իր հոր անջինջ յիշատակին նախանձախնդիր որդու, մաքուր, իդէալիստ երիտասարդի հոգին, միւս կողմից դէպի իր մայրը ունեցած որդիական բնական զգացմունքը—նա շատ նուրբ ելեւէջներով եւ տաղանդաւոր արուեստով պատկերացրեց։ Աչքի էր նաեւ նոյն գործողութեան երրորդ տեսարանը, երբ նա հանդիպում է Թագաւորին ալօթելիս. տասանման, անվճռականութեան եւ թոյլ անգործութեան այս նշանաւոր վայրկեանը նա շատ բնորոշ կերպով տարաւ։ Այդ գործողութեան յայտնի ոճնախօսութիւնը՝ «լինել թէ չը լինել» մտածված եւ վայելուչ շեշտով արտասանեց։ Ներկայացման տեսարանն ընդհանրապէս նուազ ազդեցութեամբ անցաւ. այդ տեսարանի վերջը միայն տպաւորութիւնն ուժեղ էր։ Առաջին գործողութեան մէջ սկզբում թոյլ էր, ի-կ հոր ուրուականին ունկնդրելիս՝ շատ լաւ։ Աչքի էր ընկնում այն հանգամանքը, որ պ. Ադէլհայմ հետեւելով Շէքսպիրի լաւագոյն թարգմանութիւններին՝ Համլէտի հոր մահվան պատմութեան մանրամասնութիւններին յաջորդող՝ «Սարսափելի է, սարսափելի է» խօսքերը վերագրում էր Համլէտին, այն ինչ մի քանի թարգմանութիւնների մէջ այդ խօսքերը ուրուականին են վերագրված, որ ի հարկէ բուսական անտեղի է։ Եթէ չենք սխալվում տիկին Սիրանոյշը Համլէտ խաղալիս՝ այդ խօսքերը նոյնպէս ինքն էր արտասանում եւ ոչ թէ ուրուականը։

Պալով սիւս դերակատարներին՝ պէտք է նկատել, որ ընդհանրապէս աչքի էին Պ. Բաֆայել Ադէլհայմ կատարում էր ուրուականի դերը, որ թէեւ փոքր է, բայց այս դէպքում ուշադրութեան արժանի, որովհետեւ պարոնն աշխատում էր տալ նրան մի առանձնայատուկ գիծ՝ բէալականութիւն։ Կարծես միանգամայն հաճելի Լէսլինգի ցոյցումներին՝ նա ուրուականին համարում էր բոլորովին բնական մի երեւոյթ, եւ իբրեւ գործող անձնաւորութիւն՝ ողբերգութեան միւս անձերից ամենեւին չէր տարբերվում։ Այս տեսակէտը որոշ չափով ինչքան էլ ընդունելի համարվի, այնուամենայնիւ, մեղ թւում է, որ խաղի ժամանակ բէալիզմը չը պէտք է այնքան ծայրաստիճանութեան հասցնվէր, ուրուականի էութիւնը միանգամայն չքացվէր։

Տիկին Բիբշինակայեայի Օֆելիան սկզբում թոյլ էր. խելագարութեան տեսարանը կարող էր աչքի համարվել, եթէ տիկինը իր դերին օպէրային կերպարանք չը տար։ Տիկին Վոլգինայի Գէրտրուդը, մասամբ երեւի, իր արտաքինի պատճառով, տեղ տեղ միայն կարելի էր բաւարար համարել։ Պ. Եակովլեվի Պարոնին հետեւում է մի չատ անհամ եղանակ. երաժշտութեան անտերդաչնակ նոտաները՝ մխնալով զինուորների ձայների եւ տարօրինակ, գրեթէ վայրենի ճիչերի հետ, մի կատարեալ քաոս են կազմում... բայց չը նայած դրանց այլանդակ, անհեթեթ արտաքինին, Փրկչեան բանակի հաստրած հոյսը անագին է։ Սակայն կրօնական կազմակերպութիւն է այնպէս հոգում խեղճերի, աղքատների, անտուն-անհաց անճարների մասին... Թող դրանց արածը լինի մի կաթիլ։ Ինչներիս են ուզում ձեր կրօնական եւ անօգուտ դիսպուտներ, ջուր ծեծելը, եթէ դրանց չէ հետեւում կենդանի գործ...

Ոչ-կրօնական միտինգները զբաղված են գլխաւորապէս քաղաքական եւ հասարակական հարցերով։ Այդտեղ են արէդիւնօնիստները, սոցիալ-դեմօկրատները, ֆեմինիստները եւ այլն։ Այս միտինգների առդիտորիայի մեծ մասը կազմում են բանուորները, գործատարները. այն ինչ կրօնականին՝ միջին, աւելի ազատամիտ դասակարգը եւ գլխաւորապէս այդ դասակարգի կանայք։ Հանդիսականների մէջ դուք յաճախ կը հանդիպէք եւ ասիականների։ Բայց չը կարծէք՝ թէ նրանք լրտեսելու կամ հսկելու համար են այդտեղ կանգնած։ Օհ, ոչ. նրանք եւս միւս մահկանացուների նման լսում են առենարաններին, որոնց շրթունքներից յաճախ դուրս են թռչում ոչ—երկվիտ սրամտութիւններ՝ ուղղած թագաւոր, վինիստրների հասցէին։ Ասիականը լսում է այդ, միւսների նման ժպտում. նա լսում է եւ այն ունկնդրում է հանդիսականների մի խուռն բազմութիւն։ Միւս կողմից նա իրան միանգամայն հեռու էր պահում օտարոտի երեւալու ձգտումից՝ առանց տակայն ինքնուրոյն լինելու հակումը զոհելու։

Պարոնի խաղը մեզ վրա ամենալաւ տպաւորութիւն թողեց երրորդ գործողութեան վերջին տեսարանում՝ մօր հետ բացատրվելիս. իր հոր անջինջ յիշատակին նախանձախնդիր որդու, մաքուր, իդէալիստ երիտասարդի հոգին, միւս կողմից դէպի իր մայրը ունեցած որդիական բնական զգացմունքը—նա շատ նուրբ ելեւէջներով եւ տաղանդաւոր արուեստով պատկերացրեց։ Աչքի էր նաեւ նոյն գործողութեան երրորդ տեսարանը, երբ նա հանդիպում է Թագաւորին ալօթելիս. տասանման, անվճռականութեան եւ թոյլ անգործութեան այս նշանաւոր վայրկեանը նա շատ բնորոշ կերպով տարաւ։ Այդ գործողութեան յայտնի ոճնախօսութիւնը՝ «լինել թէ չը լինել» մտածված եւ վայելուչ շեշտով արտասանեց։ Ներկայացման տեսարանն ընդհանրապէս նուազ ազդեցութեամբ անցաւ. այդ տեսարանի վերջը միայն տպաւորութիւնն ուժեղ էր։ Առաջին գործողութեան մէջ սկզբում թոյլ էր, ի-կ հոր ուրուականին ունկնդրելիս՝ շատ լաւ։ Աչքի էր ընկնում այն հանգամանքը, որ պ. Ադէլհայմ հետեւելով Շէքսպիրի լաւագոյն թարգմանութիւններին՝ Համլէտի հոր մահվան պատմութեան մանրամասնութիւններին յաջորդող՝ «Սարսափելի է, սարսափելի է» խօսքերը վերագրում էր Համլէտին, այն ինչ մի քանի թարգմանութիւնների մէջ այդ խօսքերը ուրուականին են վերագրված, որ ի հարկէ բուսական անտեղի է։ Եթէ չենք սխալվում տիկին Սիրանոյշը Համլէտ խաղալիս՝ այդ խօսքերը նոյնպէս ինքն էր արտասանում եւ ոչ թէ ուրուականը։

Պալով միւս դերակատարներին՝ պէտք է նկատել, որ ընդհանրապէս աչքի էին Պ. Բաֆայել Ադէլհայմ կատարում էր ուրուականի դերը, որ թէեւ փոքր է, բայց այս դէպքում ուշադրութեան արժանի, որովհետեւ պարոնն աշխատում էր տալ նրան մի առանձնայատուկ գիծ՝ բէալականութիւն։ Կարծես միանգամայն հաճելի Լէսլինգի ցոյցումներին՝ նա ուրուականին համարում էր բոլորովին բնական մի երեւոյթ, եւ իբրեւ գործող անձնաւորութիւն՝ ողբերգութեան միւս անձերից ամենեւին չէր տարբերվում։ Այս տեսակէտը որոշ չափով ինչքան էլ ընդունելի համարվի, այնուամենայնիւ, մեղ թւում է, որ խաղի ժամանակ բէալիզմը չը պէտք է այնքան ծայրաստիճանութեան հասցնվէր, ուրուականի էութիւնը միանգամայն չքացվէր։

Տիկին Բիբշինակայեայի Օֆելիան սկզբում թոյլ էր. խելագարութեան տեսարանը կարող էր աչքի համարվել, եթէ տիկինը իր դերին օպէրային կերպարանք չը տար։ Տիկին Վոլգինայի Գէրտրուդը, մասամբ երեւի, իր արտաքինի պատճառով, տեղ տեղ միայն կարելի էր բաւարար համարել։ Պ. Եակովլեվի

բարքական միջամտութիւնը մեր միջից,—նոյնպէս եւ մասնաւոր առաջադիմութիւնը, էվոլիւցիայի գաղափարները ոչնչացրին ասատուածային մոլեռանդութիւնը...»

Կրօնական միտինգների նիւթը ո. գիրքն է մեծ մասամբ։ Նրան կարդում, քննում, քննադատում են, այս-այն բացատրութիւնը տալիս, եւ դրանից է առաջ գալիս այն բազմակրօնութիւնը, որ այսօր տիրում է Անգլիայում։ Իզուր չեն ֆրանսիացիները ասում՝ une nation à cent religions (հարիւր կրօն ունեցող ազգ)։ Հին կտակարանի նիւթը առաձգական, մի եւ նոյնը մեթոդիսթը մի կերպ է բացատրում, եպիսկոպոսականը՝ այլ կերպ։ Երկուսն էլ հիմնվում են Աստուածաշնչի վրա. երկուսն էլ իրաւացի են, անկասկած...

Այդ կրօնական միտինգների մէջ առանձնապէս աչքի են ընկնում Փրկչեան բանակի «զինուորները»՝ իրանց տարօրինակ, անճաշակ զգեստով, միօրինակ, անհամ երաժշտութեամբ եւ վայրենի գոռում-գոչումներով։ Նրանց երաժշտական խումբը բաղկացած է լինում միմիայն մի քանի գործիքներից, որոնց մէջ է եւ մի մեծ թմբուկ։ Բանակի զինուորները՝ նայած նրանց ատիճաններին, տարբեր տարբեր նշաններ ունեն. շատ ուժեղ են կին-զինուորների հագուստները, մանաւանդ նրանց գլխարկները։ Միտինգի ժամանակ զինուորները, մի շղջան կազմած՝ իրանց դրօշակով եւ երաժշտական խմբով՝ լսում են շրջանի մէջ կանգնած ապայի կամ գնդապետի կրակոտ քարոզը, որը յաճախ ընդհատվում է զինուորների «ալելուիայ» բացականչութիւններով։ Քարոզին հետեւում է մի չատ անհամ եղանակ. երաժշտութեան անտերդաչնակ նոտաները՝ միխնալով զինուորների ձայների եւ տարօրինակ, գրեթէ վայրենի ճիչերի հետ, մի կատարեալ քաոս են կազմում... բայց չը նայած դրանց այլանդակ, անհեթեթ արտաքինին, Փրկչեան բանակի հաստրած հոյսը անագին է։ Սակայն կրօնական կազմակերպութիւն է այնպէս հոգում խեղճերի, աղքատների, անտուն-անհաց անճարների մասին... Թող դրանց արածը լինի մի կաթիլ։ Ինչներիս են ուզում ձեր կրօնական եւ անօգուտ դիսպուտներ, ջուր ծեծելը, եթէ դրանց չէ հետեւում կենդանի գործ...

Ոչ-կրօնական միտինգները զբաղված են գլխաւորապէս քաղաքական եւ հասարակական հարցերով։ Այդտեղ են արէդիւնօնիստները, սոցիալ-դեմօկրատները, ֆեմինիստները եւ այլն։ Այս միտինգների առդիտորիայի մեծ մասը կազմում են բանուորները, գործատարները. այն ինչ կրօնականին՝ միջին, աւելի ազատամիտ դասակարգը եւ գլխաւորապէս այդ դասակարգի կանայք։ Հանդիսականների մէջ դուք յաճախ կը հանդիպէք եւ ասիականների։ Բայց չը կարծէք՝ թէ նրանք լրտեսելու կամ հսկելու համար են այդտեղ կանգնած։ Օհ, ոչ. նրանք եւս միւս մահկանացուների նման լսում են առենարաններին, որոնց շրթունքներից յաճախ դուրս են թռչում ոչ—երկվիտ սրամտութիւններ՝ ուղղած թագաւոր, վինիստրների հասցէին։ Ասիականը լսում է այդ, միւսների նման ժպտում. նա լսում է եւ այն

բազմաթիւ բողոքները կառավարութեան սարք ու կարգի, կառավարական սիստեմի, սոցիալական անարդարութեան, անհաւասարութեան, բանուոր դասակարգի թշուառ վիճակի,—հասարակութեան ներկայ կապիտալիստական ռէժիմի դէմ...

—

Կիրակնօրեայ իմ միակ զուարճութիւնը, իմ միակ մխիթարութիւնը այդ միտինգներն էին։ Եւ իրաւ, երբ դուք չտաք քայլերով կարում անցնում էք կիրակնօրեայ Լոնդոնի ամայի փողոցները եւ հասնում նրա վիթխարի այգիներից մէկին՝ Հայդ պարկին, ձեր առաջ բացվում է մի հրաշալի տեսարան. ծառերով շրջապատված գեղեցիկ մեծ տափարակի վրա հագին, անթիւ-անհամար բազմութիւն՝ խմբերի բաժանված կանգնած է. իւրաքանչիւր խմբի միջից ամբիոնի վրա բարձրացած մի մի ատենաբան, որի շուրջը ամբոխը չնչաստաս, լարված ուշադրութեամբ լսում է, երբեմն հրճվում, ուրախանում, երբեմն էլ մի սարսուռ, մի ցնցում է անցնում նրա խիտ շարքերով։ Դուք եւս միանում էք ժողովրդի այդ շարքերին. ձեզ եւս հաղորդվում է ամբոխի այդ ցնցումը։ Դուք եւս սկսում էք նրա կեանքով, նրա զգացմունքներով ապրել. նրա վշտով, նրա խոհերով ուղղվել։ Միտինգը վերջանում է։ Տխուր եւ տրտում, ժամամոլոր հեռանում էք այդ խմբից եւ ձեր քայլերը ուղղում դէպի գեղեցիկ ծառաստանները...

Ս. Շիրեանց

ՆԱՄԱԿ ՂՂԼԱՐԻՑ

—

Նոյեմբերի 30-ին

Երկու տարից աւել է, որ այստեղ գտնվում են մօտ 10 ընտանիք վանեցի գաղթականներ։ Անկարելի է երեւակայել աւելի սրտաճմլիկ տեսարան, քան այդ թշուառները, որոնք ոչ հագուստ ունեն հագներին, ոչ էլ մի մարդավայել ուտելիք, էլ չենք խօսում այն ցուրտ ու խոնաւ նկուղների մասին, ուր դիշերում են կեանքի այդ խորթ զաւակները։

Մեր հասարակութիւնը իր սովորական անտարբերութեամբ բաւականանում է միայն մի կտոր հաց կամ մի «անարգ կոպէկ» շպրտելով։ Սակայն թէ որքան ՁԼասակար է օգնութեան այդ աւելի անպատիւ ձեւը, այդ խեղճերի առանց այն էլ անմխիթար վիճակը բարւոքելու համար, մենք այդ մասին լռում ենք։ Բայց հարցը այն է, թէ ինչ կը լինի արդեօք դրանց դրութիւնը այսուհետեւ։ Ցրտերը քանի գնում սաստկանում են մեղանում։ Եթէ դրանք մինչեւ այժմ իրանց ապրուստը ճարում էին, ինչպէս ասացինք, աղքատութեամբ, այսուհետեւ դրանից էլ զրկված կը լինեն, որովհետեւ ինչպէս կարող են ձմեռ ժամանակ մերկ ու բոբիկ ընկնել փողոցէ փողոց. այդ մասին դեռ եւս մտածող չը կայ մեղանում։

Եւ ով պէտք է մտածէ. մեր բարեգործական ընկերութիւնը, որ վաղուց նիրհում է անուշ քնի մէջ. մեր քահանաները, որոնց գործունէութիւնը քելեխից դէնը չէ անցնում. մեր քնքոյշ սեռը, որ մօտայից դուրս ոչինչ չէ ուզում հասկանալ, թէ վերջապէս մեր երիտասարդութիւնը, որը անունով միայն գոյութիւն ունի...

Մինչդեռ եթէ ունենայինք մի երկու եռանդոտ, գործունեայ անձինք, կարելի կը լինէր ոչ միայն մի երկու ամսով ապահովել այդ 20—30 հոգի գաղթականներին, այլ աւելի երկար ժամանակով. նախ՝ որ գործը մեծ զոհողութիւններ չէ պահանջում, եւ երկրորդ՝ որ այստեղ թէ կենսական մթերքների եւ թէ այլ իրերի էժանութիւն է տիրում համեմատաբար։ Վերջապէս եթէ ոչ մարդասիրական զգացմունքից դրդված, գոնէ շատերը, թող իրանց խաղաղ տրամադրութիւնը հանգիստ պահելու համար օգնութեան գային. պարզ է, որ երբ այդ թշուառները մի քիչ ապահովված կը լինեն, նրանց այլ եւս թոյլ չէր տրվի աղքատութիւն անել, իսկ որանով դուք, մեծապատիւ պարոններ եւ փափկասուն տիկիններ, աղաս

թագաւորը նոյնպէս երբեմն միայն տանելի էր։ Այն ինչ պ.պ. Արկունին (Լաէրտ), Պէտիպա (Հորացիո), Մակսիմով (Պոլոնիուս) եւ Ուլիխ (գերեզմանափորը) աչքի էին. աչքի էր ընկնում մանաւանդ առաջինը, որի խաղը շատ կենդանի էր։

Ինչ ասել կուզէ, որ թատրոնը բոլորովին լիքն էր։ Պ. բէնէֆիցիանտը ստացաւ մի մեծ դափնեայ պսակ եւ մի քանի ուրիշ նուէրներ։

Վ. Նալբանդեան

ՆԱՄԱԿ ՂՂԼԱՐԻՑ

—

Նոյեմբերի 30-ին

Երկու տարից աւել է, որ այստեղ գտնվում են մօտ 10 ընտանիք վանեցի գաղթականներ։ Անկարելի է երեւակայել աւելի սրտաճմլիկ տեսարան, քան այդ թշուառները, որոնք ոչ հագուստ ունեն հագներին, ոչ էլ մի մարդավայել ուտելիք, էլ չենք խօսում այն ցուրտ ու խոնաւ նկուղների մասին, ուր դիշերում են կեանքի այդ խորթ զաւակները։

Մեր հասարակութիւնը իր սովորական անտարբերութեամբ բաւականանում է միայն մի կտոր հաց կամ մի «անարգ կոպէկ» շպրտելով։ Սակայն թէ որքան ՁԼասակար է օգնութեան այդ աւելի անպատիւ ձեւը, այդ խեղճերի առանց այն էլ անմխիթար վիճակը բարւոքելու համար, մենք այդ մասին լռում ենք։ Բայց հարցը այն է, թէ ինչ կը լինի արդեօք դրանց դրութիւնը այսուհետեւ։ Ցրտերը քանի գնում սաստկանում են մեղանում։ Եթէ դրանք մինչեւ այժմ իրանց ապրուստը ճարում էին, ինչպէս ասացինք, աղքատութեամբ, այսուհետեւ դրանից էլ զրկված կը լինեն, որովհետեւ ինչպէս կարող են ձմեռ ժամանակ մերկ ու բոբիկ ընկնել փողոցէ փողոց. այդ մասին դեռ եւս մտածող չը կայ մեղանում։

Եւ ով պէտք է մտածէ. մեր բարեգործական ընկերութիւնը, որ վաղուց նիրհում է անուշ քնի մէջ. մեր քահանաները, որոնց գործունէութիւնը քելեխից դէնը չէ անցնում. մեր քնքոյշ սեռը, որ մօտայից դուրս ոչինչ չէ ուզում հասկանալ, թէ վերջապէս մեր երիտասարդութիւնը, որը անունով միայն գոյութիւն ունի...

Մինչդեռ եթէ ունենայինք մի երկու եռանդոտ, գործունեայ անձինք, կարելի կը լինէր ոչ միայն մի երկու ամսով ապահովել այդ 20—30 հոգի գաղթականներին, այլ աւելի երկար ժամանակով. նախ՝ որ գործը մեծ զոհողութիւններ չէ պահանջում, եւ երկրորդ՝ որ այստեղ թէ կենսական մթերքների եւ թէ այլ իրերի էժանութիւն է տիրում համեմատաբար։ Վերջապէս եթէ ոչ մարդասիրական զգացմունքից դրդված, գոնէ շատերը, թող իրանց խաղաղ տրամադրութիւնը հանգիստ պահելու համար օգնութեան գային. պարզ է, որ երբ այդ թշուառները մի քիչ ապահովված կը լինեն, նրանց այլ եւս թոյլ չէր տրվի աղքատութիւն անել, իսկ որանով դուք, մեծապատիւ պարոններ եւ փափկասուն տիկիններ, աղաս

կը լինէք գաղթականների «մնգլոտ» երեսները ու «զիլզիլա» հագուստները տեսնելուց, որ մի անգամ չեն միայն ձեր ներվերը վիրաւորել, որից ազատվելու համար հազար ու մի սպառնալիքների հետ բարեհաճեցէք եւ երբեմն մի սեւ գրոշ սեւցնել...

Վ. Մանուկեան

ՆԱՄԱԿ ԵՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Գրօզնա, նոյեմբերի 10-ին

«Մշակի» 236 համարում «Անցորդ» ստորագրութեամբ նամակագիրը, անարժան կերպով զրպարտելով ինձ՝ իբր թէ ես հակառակ թեմական իշխանութեան կարգադրութիւնների, չրջել եմ եւ այժմ էլ շարունակում եմ չրջել բոլոր հաղորդվողների անները վարձատրվելու նպատակով, իր մեղադրանքը աններելի է համարում մանաւանդ այն պատճառով, որ ես տարեկան իբր 1600—2000 բուբլի եկամուտ եմ ստանում, ունենալով իմ հովութեան տակ Գրօզնայում եւ նրա չրջակայքում 150-ի չափ հայ ընտանիքներ, կէսից շատ ունեւոր։ Պ. Անցորդը երէցփոխ պ. Յովհաննիսեանցի վերաբերմունքն էլ դէպի իր պաշտօնը գտնում է վերջերս բոլորովին ստած իբր իմ անհամակրելի վարմունքի պատճառով եւ մի եւ նոյն ժամանակ խորհուրդ է տալիս նրան՝ չը հեռանալ գործից։

Այսպիսի միանգամայն անտոյգ տեղեկութիւններ, որ պ. Անցորդն է իրան թոյլ տուել հաղորդելու ընթերցող հասարակութեանը, անկարելի է լռութեան տալ։ Իմ ծխականները հաւատաց ամենքն էլ հաղորդվել են մեծ պատի ընթացքում, եւ ես երբէք թոյլ չեմ տուել ինձ չրջել նրանց անները՝ օգտվելու նպատակով. բայց թէ առաջին եօթնեկի հաղորդվող 26 ընտանիքներից երեքը, այն է՝ պ.պ. Յարութիւնեանց, Շուիլեանց եւ Յովհաննիսեանց, որ առաջնակարգ ծխականներիցն են, տեղական ուժերով Գեամբ, հրաւիրել էին ինձ ճաշի, այդ ճիշդ է. եւ ես առաջին հրաւիրող պ. Յարութիւնեանցի հրաւէրը ընդունելով, տեղանակից եմ եղել նրանց, տանը իբրեւ հիւր, առանց որ եւ է վարձատրութիւն ստանալու եւ մի եւ նոյն ժամանակ դժգոհութեան առիթ չը տալու համար միւս երկու հրաւիրող պարոններին, պատրաստից յետոյ նախապէս այցելել եմ եւ նրանց անները։

Ի դէպ է յիշել այստեղ, որ եթէ ես նորանոր արդիւնքներ որսնող հոգեւորականներից լինէի, ինչպէս պ. Անցորդն է գրում, երբէք չէի հրաժարվի տեղիս քաղաքային օրիորդաց դպրոցի աշակերտուհիների ծնողների կողմից ուսումնարանական վարչութեամբ որոշած դրամական վարձատրութիւնից եւ ձրիաբար երկու դպրոցներումն էլ չէի ստանձնի կրօնի դասաւանդութիւն։

Գալով Գրօզնայի եւ չրջակայքի ժողովրդականների թիւին եւ քահանայական արդիւնքի քանակութեան, պէտք է ասած, որ նամակագրի կողմից միանգամայն չափազանցութեան է հասցրած այդ տեղեկութիւնը, որովհետեւ այս տարվայ ապրիլ ամսին կազմած եւ կոնսիստորիային ներկայացրած ծխականների ցուցակով քաղաքի ժողովրդի թիւը հասնում է միայն 84-ի, իսկ չրջակայքինը—25-ի, որոնց հաշումն են եւ 13 տուն քարփուչեցի հողագործ ժողովուրդը։

Նաբեթային արդիւնաբերութեամբ հռչակված Գրօզնայում ամբողջ նաբեթային գործը օտարազգիների ձեռին է. հայերից չը կայ ոչ մի հողատէր կամ արդիւնաբերող։ Հայերի ունեւոր մասը կազմում են 8—10 զանազան ապրանքների խանութ ունեցողները, իսկ մեծամասնութիւնը—բրուներ, աղիւսագործներ, քարտաշներ, կօշկակարներ, դերձակներ եւ կառապաններ են։

Իսկ ինչ վերաբերվում է երէցփոխ պ. Յովհաննիսեանցի պաշտօնավարութեանը, այնքանը կասեմ, որ նա իբրեւ ժամանաւոր ծառայութեան մէջ գտնվող անհատ, որքան ձեռնհաս է լինում՝ ինքն է անձամբ կատարում երէցփոխական պարտականութիւնները, իսկ ծառայութեամբ զբաղված ժամանակը իր պաշտօնակից պ. Արշակ Թառուսեանցն է կատարում, որ նոյնպէս մի ազնիւ եւ եռանդոտ երիտասարդ է։

Գէորգ քահ. Մելիքսէթեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պարիզից մեզ գրում են, որ դեկտեմբերի 18-ին (ն. տ.) կայացաւ այդտեղ Ասիական ընկերութեան ամսական նիստը, ուր ի միջի այլոց, պ. Կ. Բասմաջեան կարդաց մի զեկուցում «Վանի մի նոր արձանագրութեան մասին, գտնված Կիվիլ-Գալէյում (Մանազկերտում)»։ Մի քանի առարկութիւններ արեց յայտնի ասորագէտ Օպպէրտ, որը կարդաց յետոյ զեկուցումն «Բաղդէական քաղաքների ժողովրդական երգերը Ալէքսանդրի ժամանակ»։

—

Կովկասեան ցուցահանդէսի էքսպօնենտներից փոքր արծաթեայ մեդալ ստացել են հետեւեալ անձերն ու հիմնարկութիւնները.—Ղարիբեանց (Դաղստանի չրջանից, ցորեն), Օհանեանց (Գանձակ, վազի մշակութիւն), իշխան Աբամելիք եւ Մամուլով (գինի), Սաֆիանեան եւ Բէգիջանեան (գինի), Ա. Տէր-Յարութիւնեան (գինի), Յովսէփ Խիթարեան (գինի), Ե. Գ. Օհաննէսեան (կովկասեան տեսակի վազի մշակութիւն), Սողոմոնեան (օղի), Մանուչար Ասիւծեանց (գինի), Կ. Աֆրիկեան (կոնեակ), Դոլուխանեան (չորացրած բոյսերի ժողովածու եւ ամտեսութիւն), եղբ. Ֆօրէս (ձի), Կայսերական փորձնական դաշտ (ձի), Զիթողցեան (բաղեր), Ն. Վ. Ղազարով (ձի, եւ 50 բուբլի դրամական պարգեւ), Վ. Է. Քալանթարեան (չվէյցարական պանիր), Ֆինգարտ, Ամէտէր, Գրաֆ, Դաաեվ, Կարաեվ եւ Սալովեվ, Խ. Ամէտէր, Գէշ, Զիգէնտալէր, Ախալքալաքի քաղաքային ուսումնարան (չվէյցարական պանիր), Տէր-Զաքարեանց եւ Գասպեանց (չերտամի սերմ), Բաբայեան (մեղրաջուր), Գապեանց (չերտամի սերմ), Ե. Ֆ. Խան-Աղեան (չերտամապահութիւն), Ղազարեանց (մեղրաջեայ գործուածքներ), Ա. Քալանթարեան (չերտամի սերմ), Սաֆարով (լաւ ներկուածք), Դ. Ա. Բարխուդարեան (մեղուապահութիւն), Ա. Մխիթարեան (նոյնպէս), Դուխոբորով (նոյնպէս), Յ. Մելիք-Բախտամեան (նոյնպէս), Ե. Ֆ. Խան-Աղեան (նոյնպէս), Տէր-Սարգսեան (չուն), Սմբատ Գրիգորեան (ամալգամա), Խէչօ Գալուստեան (կարասիք), Գրիգոր Յովսէփեան (ասիական չորեր), Արշակ Յակոբեան (ասիական չորեր), Արշակ Զաքարեան (գլխարկներ), Վ. Գեօնջեանց (Ալէքսանդրօպոլ, մետաղներ ծնծեղնու գործիք), Ատովմեանց (կարասել), Գանձակի VI դասարանեան քաղաքային ուսումնարան (ձեռքի աշխատանք), Վաղարշապատի օրիորդաց միդասեան ուսումնարան, Երեւանի օրիորդաց սեմինարիա (նկարչութիւն), Կուչենբախ (կրաւիա), Խոշորովսկի (գիպս եւ ալեբաստր), Ա. Կ. եւ Ֆ. Ազարեան եղբայրներին (ոչխարի կաշուի պատրաստութիւն եւ ներկ), Ա. Գաբրամեանց (ասիական ձեւով պատրաստած կաշի), Սաֆարով (ծխախոտ), Թիֆլիսի Միքայէլեան արհեստաւորաց ուսումնարան (կարասիք) եւ ուրիշներ։ Մեծ ոսկեայ մեդալ ստացել է նաեւ Մ. Ս. Միրզայեանց լուի ծաղկի համար։

—

Հինգշաբթի, դեկտեմբերի 13-ին, վրայ թատրոնում կայացաւ դերասան Աբաշիձէի բենեֆիսը. այդ գիշերը պէտք է խուզային երկու պիէս՝ «Զարմանալի թակարդ» եւ «Рыцарь безъ страха и упрека» 2 գործ. Զուպպէի օպերէտը։ Սրանցից առաջինը դերասաններից անկախ պատճառով չը խաղացվեց եւ դրա փոխարէն ներկայացրին Անտօնովի վաղուց հնացած «Ես ցանկանում եմ իշխանուհի դառնալ» կոմեդիան։ Ի հարկէ Աբաշիձէն, ինչպէս եւ միշտ, մեծ ճարպիկութեամբ կատարեց հայի տիպը եւ ծիծաղեցրեց ներկայ եղող հասարակութեանը։ Ինչ կը վերաբերի օպերէտին՝ խաղի կողմից բաւական էր, բայց նոյնը չենք կարող ասել երգեցողութեան մասին. այդ գիշերը իբր օպերետներ առաջ եկան տիկին Տատա Աբաշիձէն եւ պ.պ. Աբաշիձէ, Գեղեվանով եւ Շատիրով. այս կոմիկները մեծ բաւականութիւն պատճառեցին իրանց խաղով, բայց երգեցողութեան մէջ աղողութիւն ունեցաւ միայն տիկ. Տատա Աբաշիձէն եւ ստիպվեց կրկնել երգած կտորները։ Թատրոնը ծայրէ ի ծայր լիք էր հասարակութեամբ։

—

Վարակիչ հիւանդութիւնների դէմ անցեալ տարվայ ընթացքում պետական գանձարանի հաշուով ձեռնարկված միջոցների վրա ծախսված է 810,000 բուբլի։ Այս գումարից հակաժանտախտային միջոցների վրա ծախսված է 790,000 բուբլի եւ 120,000 բուբլի այն սանիտարական միջոցների վրա, որոնք ձեռնարկված են կովկասեան երկիրը խօլերայից պաշտպանելու համար։

—

«Юридическая Газета» լրագրի ասելով, ֆինանսների մինիստրութեան մէջ շուտով կը քննվի առեւտրական ուսումնարաններում աւարտողներին ոչ միայն բոլոր ժամանագիտական բարձրագոյն ուսումնարաններում, այլ եւ համալսարանի մի քանի բաժանմունքներում ընդունելու հարցը։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Օրէցօր այստեղ աւելանում է հայ գաղթականների թիւը—աղաժարդիկ, կանայք, աղջիկներ։ Բաղուի որ փողոցով անցնելու լինէք, միշտ կը հանդիպէք այդ գաղթականների, որոնք մինչեւ երեկոյ շրջելով քաղաքի մի ծայրից մինչեւ միւս ծայրը՝ ողորմութիւն են խնդրում... Բայց ցաւալի է տեսնել առողջ աղամարդկանց, նոյն իսկ հասակն առած տղաներին, որոնք նոյնպէս ողորմութիւն են խնդրում։ Էլ ով մնաց։ Միթէ հասակաւորները եւ առողջները չեն կարողանում մի որ եւ է արհեստով պարապել կամ ծառայութեան մտնել։ Բոլոր շահագիտաններին ուսած է բնակարան ապրելու համար, բայց էլի կանայք՝ երեխաները գրկած կամ մէջքին կապած, շրջում են դռնէդուռ։ Եւ եթէ իմանաք թէ ինչեր են լսում այդ խեղճերի ականջները։ Մի կերպ պէտք է տնօրինել այդ դժբախտների վիճակը. մինչեւ երբ քաշ գալ փողոցներում, ծաղրի եւ լիրբ ակնարկութիւնների առարկայ դառնալ։»

—

ԲՈՒԹԱՑԻՍԻՑ մեզ գրում են. «Քառասուն տարուց աւել է, որ այստեղի քահանայ Դաւիթ Եարալեանցը ամենայն բարեխղճութեամբ ծառայում է մեր եկեղեցուն։ Եարալեանց քահանան միշտ ժողովրդական մարդ է եղել եւ միշտ հանդիսացել է ոչ որպէս միայն քահանայ, այլ եւ որպէս հասարակութեան արժանաւոր ու պիտանի անդամ, ցաւակից եւ ուրախակից մարդ-քահանայ թէ իւրայինների եւ թէ օտարների համար, քաջ հովիւ, միջնորդ եւ հաշտեցնող երկու հակառակ կողմերի, իսկ անօգնականների համար միջնորդ եւ պաշտպան մեծաւորների առաջ, առանց կրօնի եւ ազգի խտրութեան։ Հայր Եարալեանցը թէեւ հարուստ քահանաներից չէ, բայց իւր գրպանը միշտ բաց է ունեցել իրան դիմողների եւ բարեգործական նպատակների համար։ Ահա այս տեսակ երախտիքները յիշելով, Բուֆայիի հայ հասարակութիւնը ցանկանում է ընտանեկան կերպով տօնել ներկայ դեկտեմբերի 24-ին ծխատէր Դաւիթ աւագ քահանայ Եարալեանցի քահանայութեան 42-ամեակը։»

—

ՂԱՐԱՍՈՒ-ԲԱՁԱՐԻՑ մեզ գրում են. «Վենետիկի Մխիթարեան միաբանութեան հիմնադիր Մխիթար աբբայի մահարձանի համար տեղիս մի խումբ անձանց մէջ հաւաքելով 40 բուբլի, այդ փողը ուղարկվեց միաբանութեան աբբահայր Իգնատիոս արքեպիսկոպոս Կիւրեղեանին։»

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Մօտ օրերս մեր քաղաքի հայ ժողովրդի խստակցութեան գլխաւոր նիւթերից մէկն էր խնդիրքով դիմել Վեհափառ Կաթողիկոսին՝ խնդրելով հեռացնել յաջորդ Սիօն վարդապետին ու նշանակել նախկին յաջորդ (այժմ Կարսի թաջորդ) Կիւրեղ վարդապետ Կիւրեղեանին։ Կազմվեց այդ խնդրագիրը եւ ծածկվեց ստորագրութիւններով ժողովրդի ամեն խաւերից եւ ապա ուղարկվեց Էջմիածին։ Ցանկալի է եւ յուսալի, որ ժողովրդի արդարացի կամքը չը բռնաբարվի։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, դեկտեմբերի 2-ին

Թաւրիզի հայ հասարակութիւնն էլ այսօր հանդիսաւոր պատարագ եւ հոգեհանգիստ կատարեց հանգուցեալ հ. Ղեւոնդ Ալիշանի յիշատակին։ Ներկայ էր բաւական մեծ բազմութիւն։ Առաջնորդ Եղիշէ ծ. վարդապետը քարոզ խօսեց։ Նա նախ բացատրեց, որ քրիստոնէական եկեղեցին խտրութիւն չէ դնում դաւանանքների մէջ, նա տալիս է իր օրհնութիւնը ամեն մի հոգեւորականի, լինի նա հայ բողոքական, հայ կաթոլիկ, թէ հայ լուսաւորչական, այդ մի եւ նոյն է, ուր մնաց, որ այժմ հ. Ալիշանն է, որը կէս դարից աւելի անխոնջ աշխատել է հայ ազգի համար։ Հայր սուրբը մեծ ցաւակցութիւն յայտնեց, որ դեռ կան մարդիկ, որոնք ճանաչում են այդ խտրութիւնը եւ ձգտում են նոյն իսկ պղտորել ժողովրդի միտքը։

Ապա հայր սուրբը չեչտեց եւ բացատրեց, որ հ. Ղ. Ալիշանը եւ բանաստեղծ եւ գիտնական է, աշխարհագրագէտ եւ ուսումնասէր, հնագէտ եւ հմուտ թարգմանիչ։

Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ Թաւրիզցիներից շատ քչերին է ծանօթ Ալիշանի նոյն իսկ գլուխ գործոցները, գների անմատչելի լինելու պատճառով, առաջնորդը առաջարկեց, որ գոնէ Թաւրիզի հասարակութիւնը բերել տայ երկու թաղի դպրոցների համար Ալիշանի բոլոր տպված աշխատութիւնները։

«Լարանական» ընկերութեան վարչութիւնը առաջնորդի եւ հասարակութեան առաջարկով կազմակերպել էր մի գրական ցերեկոյթ հանգուցեալ հ. Ալիշանի յիշատակին։ Այդ գրական ցերեկոյթը եղաւ հէնց պատարագից յետոյ։ Այստեղ էլ նոյնը կրկնվեց, ինչ հայր առաջնորդը ասաց եկեղեցում, միայն ընդարձակ եւ մանրամասն։ Այդքանից աւելին էլ իրաւունք չունենք պահանջելու, քանի որ Թաւրիզում, ուր կայ երկու գրադարան, չը կան Ալիշանի գոնէ գլխաւոր աշխատութիւնները, որպէս զի հնարաւորութիւն ունենան դասախօսները օգտվելու։

Առաջնորդը իր առաջարկութիւնը գործնականապէս իրականացնելու համար հէնց ցերեկոյթից յետոյ ստորագրութիւն բացեց. ստորագրեցին մօտ 100 թուման (200 ր.) եւ դեռ շարունակվում է ստորագրութիւնը։

Այսօր, երեկոյեան, Վենետիկի միաբաններին հեռագրվեց հետեւեալը. «Միացնում ենք մեր արցունքները միաբանութեանդ խոր վշտի հետ, Ալիշանի մահվան առիթով։ Այսօր կատարվեց հոգեհանգիստ եւ ցերեկոյթ նրա յիշատակին։ Ի դիմաց հայ ժողովրդի՝ առաջնորդ Եղիշէ վարդապետ»։

Ե. Ֆրանգեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կրակովում կայացաւ լեհ կանանց ի բազմամարդ միտինգ՝ տեղական հասարակութեան նշանաւոր ներկայացուցչուհիների մասնակցութեամբ։ Մի շարք ճառերից եւ զեկուցումներից յետոյ, մի քանի որոշումներ կայացան ի պաշտպանութիւն լեհական ազգային շահերի։ Այդ միտինգում, ի միջի այլոց, որոշվեց այլ եւս պրուսական ապրանքներ չը գնել, եւ ամէն յարաբերութիւնները կտրել պրուսացիների հետ։ Այդ վճիռը, ինչպէս երեւում է, իր ազդեցութիւնը ունեցաւ։ Համբուրգի յայտնի «C. A. Arnold» հրատարակչական ֆիրման ուղարկեց Գալիցիայի գրավաճառներին նախկին տարիների նման իր կատալոգները։ Վերջինները վերադարձրեցին «Վրեչէն» լակոնական մակագրով։ Այն ժամանակ ֆիրմայի տէրը դիմեց լեհ գրավաճառներին հեռագիր ղրկելու բովանդակութիւն ունեցող մի չրջաբերական նամակով լեհերէն լեզուով. «Համբուրգ, 11 դեկտեմբերի։ Իմ կատալոգի ծրարից ես եղրակացնում եմ, որ դուք, մեծապատիւ պարոն, հրաժարվում էք ընդունել այդ կատալոգը վրէշչենոն դէպքի պատճառով։ Բայց, պարոն, միթէ ես պատասխանատու եմ մեր կառավարութեան գործած տրագի-կոմէդիայի համար։ Ես ոչ օքին չեմ տիպում գնել ինձ մօտ, բայց կը ցանկայի առաջվան պէս բարեկամական յարաբերութիւններ պահպանել իմ կլիենտների հետ, եւ այդ պատճառով խնամարհաբար խնդրում եմ ձեզ ինձ մեղաւոր չը համարել այն բանում, ինչ բան որ ես ամենեւին հնար չունէի արգելել։ Արտուր Արնօլդ»։

—Նոյեմբերի 5-ին, ինչպէս հաղորդում են անգլիական լրագիրները, Բիրմինգամի քաղաքային խորհրդի չինութեան մէջ նշանակված էր ժողով, որի ժամանակ պէտք է մատ արտասանէր պատգամաւոր Լլոյդ Ջորջ, որը յայտնի է որպէս ջերմ բօէրասէր։ Բայց «հայրենասէրները» անցկացրին դալիճը չատերին իրանց կողմնակիցներից եւ երբ ճառախօսը երեւաց բեմի վրա՝ նրան դիմաւորեցին չուլոցներով եւ բողոքներով։ Ապա «հայրենասէրները» փորձեցին գրաւել բեմը յարձակմամբ, բայց յետ մղվեցին ոստիկանութիւնից։ Դրանից յետոյ խուռն ամբոխը, որ հաւաքվել էր չինութեան առաջ, կոտրատեց քարերով նրա բոլոր ապակիները։ Լլոյդ Ջորջին գաղտնի դուրս տարան դահլիճից՝ հագցնելով ոստիկանի համազգեստ։ Ամբոխը ժողով կազմեց եւ որոշում կայացրեց, որով վստահութիւն է յայտնվում կառավարութեան եւ արհամարհանք Լլոյդ Ջորջին, որպէս դաւաճանի։ Ամբոխը ուղարկեց նաեւ համակրական հեռագիր Չեմբերլէնին։ Զը սահմանափակվելով դրանով, ցոյց անողները ակսեցին կոտրատել քաղաքային խորհրդի չինութեան դռները. բայց նրանց դէմ դուրս եկաւ մի ոստիկանական զօրաբաժին, բաղկացած 500 հոգուց։ Սկսվեց կատաղի կռիւ, որի հետեւանքն եղաւ այն, որ 27 հոգի վիրաւորվեցին, իսկ մէկը սպանվեց։ Քաղաքային խորհրդի դահլիճում ամբողջ յատակը ծածկված էր քարերով եւ ապակու կտորներով. կարասիքը ջարդված ու փչրված էր եւ ամեն ինչ թշնամու յարձակման կնիք էր կրում իր վրա։

—Լիսաբոնից հաղորդում են «Neue Freie Presse» լրագրին, թէ Լօբէնցօ Մարկեզէից Պօրտուգալիա եկած ճանապարհորդները պատմում են, որ նորերումս պօրտուգալական տիրապետութիւնների սահմանի մօտ անգլիացիների եւ բօէրների մէջ տեղի է ունեցել կատաղի կռիւ, որի ժամանակ անգլիացիները յաղթվել են եւ անցնելով սահմանը, ապաստան են որոնել պօրտուգալական հողի վրա։ Պօրտուգալական պահակախմբի գլխաւորը պահանջել է, որ անգլիացիները զինաթափ լինեն, բայց անգլիացիները հրաժարվել են։ Այս ապիթով տեղի է ունեցել կռիւ պօրտուգալացիների եւ անգլիացիների մէջ։ Պօրտուգալացիներից սպանված են մի օֆիցէր, մի սերժանտ եւ երեք զինուորներ, բայց յայտնի չէ, թէ սպանված են նրանք արդեօք անգլիացիների, թէ բօէրների գնդակներով։

—«Neue Freie Presse» լրագիրը, քննելով երեքպետեան դաշնակցութեան վերանորոգման հարցը, կարծիք է յայտնում, թէ իբր Ֆրանսիան այժմ աշխատում է մոռնալ Իտալիային, որպէս զի յետ կանգնեցնէ նրան երեքպետեան դաշնակցութեան մասնակցելուց։ «Իտալիայում այժմ սիրող արամադրութեան ժամանակ,—ասում է լրագիրը,—ամենեւին զարմանալի չի լինի, որ Ֆրանսիան հանի իր նպատակին եւ զրկէ Գերմանիային ու Աւստրիային նրանց հարաւային դաշնակցից։»

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

13 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Դեկտեմբերի 13-ին, հանդուցեալ իշխան Եւգէնի Մաքսիմիլիանովիչ Ռոմանովսկու, Դուքս Լէյխտէնբերգսկու մահվան օրը, Իսիդորեան եկեղեցում մատուցվեց պատարագ եւ կատարվեց հոգեհանգստեան պատարագ։

ԿԻԵՎ։ Դեկտեմբերի 11-ին կադէտների կօրպուսում տեղի ունէր հանդիսաւոր պարահանդէս։ Ընդարձակ դահլիճը չքեղ կերպով զարդարված էր, Ժամը 9-ից յետոյ ժամանեց Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ, որին դիմաւորեցին ազգային հիմնով, որը ծածկվեց ոգեւորված «ուրաներով»։ Ապա սկսվեց կադէտների կօնցէրտը. մօտ տասն եւ մէկ ժամին սկսվեցին պարերը. հիւրերը մօտ երեք հազար էին. ներկայ էին երկրի հրամանատարը ընտանիքով, զինուորական եւ քաղաքացիական վարչութիւնների ներկայացուցիչները, գեներալները, նախկին չատ կադէտներ, զինուորականներ եւ այլն։ Մեծ Իշխանը գնաց ննջարանը եւ ներկայ էր, երբ կադէտները հանվում էին եւ պատրաստվում էին քնելու։ Ժամը 2½-ին Մեծ Իշխանը կօրպուսից գնաց Գոկրովսկի վանքը։ Պարահանդէսը շարունակվեց մինչեւ երեք ժամը։ Մեծ Իշխանուհի Ելիսաւետա Մաւրիկիեւնա, հիւանդութեան պատճառով, չը կարողացաւ մասնակցել յօբելեանի տօնախմբութիւններին։ Դեկտեմբերի 11-ին Մեծ Իշխանուհին ընդունեց նախկին կադէտների պատգամաւորութիւնը, որոնք մատուցին մի չքեղ ծաղկեփունջ արծաթէ փնջակալի վրա հեռեւեալ մակագրութեամբ. «Որպէս բարի յիշատակ նախկին եւ ներկայ կադէտներից»։—Դեկտեմբերի 12-ին, 12 ժամին, նահանգի հրամանատարի մօտ տեղի ունեցաւ նախաճաշ, որը իր ներկայութեամբ պատուեց Մեծ Իշխանը։ Հրաւիրված էին զինուորական եւ քաղաքացիական հաստատութիւնների առանձին մասերի հրամանատարները։ Նախաճաշից յետոյ Օգոստափառ հիւրը գնաց Սօլովցովի դրամատիկական թատրոնը հանդիսաւոր ներկայացմանը. խաղում էին «Գոնիէրը»։ Թատրոնում ներկայ էին նահանգի եւ քաղաքի բարձր ներկայացուցիչները, շատ զինուորականներ, կադէտներ եւ կօրպուսի նախկին սաները։ Ներկայացումից առաջ, չքեղ զարդարված բեմի վրա, Նոցա Կայսերական Մեծութիւնների կիսարձանի շուրջը, դրամատիկական խումբը երաժշտական խմբի հետ երգեցին ազգային հիմնը, որը հասարակութեան պահանջմամբ, կրկնվեց երեք անգամ։ Ներկայացումը շատ կենդանի անցաւ։ Վեց ժամին Օգոստափառ հիւրը գնաց զինուորական դպրոցը։—Երեկոյեան հինգ ժամին։ «Նէւրոպէյսկայա հիւրանոցում» տեղի ունեցաւ հին կադէտների ճաշը. մասնակցում էին մօտ երկու հարիւր հոգի։

ԵՐԵՒԱՆ։ Դեկտեմբերի 13-ին, Կովկասի այստեղ ժամանած կառավարչապետի, նահանգական վարչութեան, քաղաքի ներկայացուցիչների եւ բազմաթիւ ժողովրդի ներկայութեամբ տեղի ունեցաւ երկաթուղիական կառուցումների օրհնութիւնը եւ Երեւանեան երկաթուղու ժամանակաւոր երթեւեկութեան բացումը։

ՎԱՐՇԱՎԱ։ Բժշկական վարչութեան մէջ մշակվում են կանոններ առողջապահական պահանջներին բաւարարութիւն տուող լուացարանների համար։—Վարշավայում կազմվում է փայերով մի ընկերութիւն՝ Պրուշինսկու հնարած պլէօդրաֆը կամ գունաւոր կինէմատոգրաֆը շահագործելու համար։

ՊՐԷՏՕՐԻԱ։ Անձնատուր եղող բօէրների մէջ սատակնում է շարժում՝ ի նպաստ «National Scouts»-ի հետ միանալու, որպէս զի այդ միջոցով կարողանան պատերազմին շուտ ուարտ տալ։ Այդ գործերի շատ լաւ ծառայութեան պատճառով, վերջին ժամանակներս թոյլատրված է կազմակերպել երկու նոր զօրաբաժիններ Տրանսվալի արեւելեան եւ հարաւային մասերի համար։ Արդէն հաւաքված են 200 մարդիկ բօէրական յայտնի պարագլուխի հրամանատարութեան տակ, որին ընտրել են հէնց իրանք։

ՆԻԻ-ԵՕՐԿ։ Պաշտօնապէս հաղորդվում է, որ Շօու նշանակված է պետական քարտուղար Գէդժի տեղ։

ԲԷԼԳՐԱԴ։ Սկուպշչինան ընդունեց պատճառաբանված վճիռ, որով ցաւակցութիւն է յայտնում այն բանի առիթով, որ 1900 թ-ին դատապարտված երկու օֆիցէրներ չը զրկվեցին իրանց օֆիցէրական կոչումից։ Այդ վճռի պատճառով զինուորական մինիստրը հրաժարական տուեց, որը ընդունվեց թագաւորից։

ՊԱՐԻԶ։ Արգէնտինեան եւ Չիլիի հանրապետութիւնների միջեւ եղած վէճի այժմեան դրութեան վերաբերմամբ «Հաւատի գործակալութեանը» դեկտեմբերի 12-ից Սանտիագոյից հաղորդում են հետեւեալը. «Ընդհատելով բանակցութիւնները՝ Չիլիի հանրապետութիւնը առաջարկեց նոր պայմաններ. Արգէնտինեան հանրապետութիւնը փոփոխեց այդ պայմանները, եւ Չիլին փոփոխութիւններով դեկտեմբերի 12-ի երեկոյեան ստորագրեց դրան վերաբերեալ գօկումէնտները»։

ՐԻԳԱ։ Ժամանեց Վիլնօի զինուորական շրջանի գլխաւոր հրամանատարը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Դեկտեմբերի 13-ին սկսեց իր պարապմունքները ֆինանսների մինիստրութեան թոյլատրութեամբ գումարված ռուսական երկաթուղիների սակագնային հանձնաժողովը։

14 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Տուրինսկի գաւառում այրվեց Անդրէեվների մահուդէ գործարանի մի մասը։ Վնասը 40,000 րուբլի է։

ԿԻԵՎ։ Դեկտեմբերի 13-ին, առաւօտեան 9 ժամին, Մեծ-Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ ժամանեց կադէտների կօրպուսը եւ այցելեց զանազան շինութիւնները։ Կադէտները Նորին Կայսերական Բարձրութեան դիմաւորեցին ոգեւորված բացագանչութիւններով եւ անընդհատ «ուրաներով»։ Ժամը 10-ին տեղի ունեցաւ մանկավարժական մասնաժողովի նիստը Մեծ Իշխանի նախագահութեամբ եւ Բուտովսկի ու Ալէքսէեվ գեներալների եւ կօրպուսի մանկավարժների մասնակցութեամբ։ Մօտ 1 ժամին Մեծ Իշխանը գնաց կօրպուսից, կադէտների ոգեւորված «ուրաների» ուղեկցութեամբ։ Մօտ 3 ժամին Մեծ Իշխանը այցելեց զինուորական դպրոցը եւ մնաց այնտեղ մօտ 1 ժամ։ Վեց ժամին կայացաւ ճաշ երկրի հրամանատարի մօտ, որը արժանացրեց իր ներկայութեամբ Մեծ Իշխանը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցովի արէանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, մեներական («ինֆլիս») և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Կ. Ի. Գզելիով—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ
Զ. Ի. Բարանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Գ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ն. Ն. Ռոստոմբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.
Ա. Ն. Շպուլովսկի—6—7 ժ. նեարդային (նլեկտրաբոյժ), վներ. և մորթու հ.
Գ. Ա. Թարխանեանց—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համոխորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Ս. Առվանիչեանի—տանը. ծաղկահատ և բժշկական մերձամարդ. դիմել 11—1 ժ.։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԱՐՀԵՍՏԱՆՈՑ „ԲՕՍՖՕՐ“

Ընդունում եմ ձեռքով կամ մեքենայով կարված սպիտակեղէնի ամեն տեսակ պատուէրներ։ Պատրաստվում են ամբողջ օժիտ, նուրբ ասեղնագործված բարձեր, տաբեր եւ այլն։ Տրվում են կար ու ձեւի եւ ձեռագործի դասեր։ Ընդունվում են ձրի եւ թոշակաւոր աշակերտուհիներ։
Ընդունվում են պատուէրներ եւ օտար քաղաքներից։
Հասցէն՝ Тифлисъ. Абасъ-Абадскій переулокъ, мастерская «Босфоръ».
(հ. չ. ե.) 2—3

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐ-ՋՈՒՂԱՅՈՒ

I եւ II հատոր 497 եւ 317 էջերից, աշխատ. Յար. Թ. Տէր-Յովհաննեանցի
Վաճառվում են երկու հատորը Յիսանին։
Գինն է ճանապարհածախսով 2 ր. կամ 5 ֆր.
Դիմել՝ Tigran T. Abgariantz, Gulfa-Ispahan, (Perse). 1—4

ԳՈՒՏՏԵՆԲԷՐԳ

Գրախանութում վաճառվում են հետեւեալ գրքերը
«Մխիթար կամ Մխիթարեան յօբելեան» 3 ր.
«Գեղուհի», բ. տետրակ, պատկերազարդ 35 կ.
«Առձեռն բառարան» հայերէն լեզուի, բ. տպագրութիւն, կազմած, 4 ր. 50 կ.
«Մատենագրութիւն հայկական թարգմանութեանց նախնեաց, Զարբհանալեանի 2 ր.
«Կենդանական կամ բուժական մագնէտիզմ, թարգմ. Փ. 15 կ.։
«Կոմս Մոնթէ-Քրիսթոյ» Ա. Դիւմայի, 6 հատոր, թարգմ. Տ. Տէտէյեանի 12 ր.
«Փիլիսոփային աշակերտը», վէպ. Գոլ-Բուրժէի, թարգմ. Օ. Ս. 70 կ.
«Առողջապահութիւն անային, դոկտոր Տաղաւարեանի 2 ր. 50 կ.
«Գաղտնիք Փարիզու» 4 հատոր 10 ր.
Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ Гутенберга», Г. Галустяну, Лорисъ.-Меликовская, № 11. 1—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

տրանով յայտնում է, որ նրա դիւանատանը, դեկտեմբերի 18-ին, ցերեկվայ ժամը 12-ին, նշանակված է աճուրդ՝ կապալով տալու Բեռանի կոյուղի շինութիւնը՝ 34,00 սաժէն երկարութեամբ և 0,375×0,95 կարուածքով, Վօզնեսենսկայա փողոցում այժմ գոյութիւն ունեցողից Շվինդիսի փողոցով մինչեւ Կոսվօեվի տունը, 720 րուբլի գումարի։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը ուպրավայի շինարարական բաժանմունքում բոլոր լի օրերը, ժամը 9-ից մինչեւ 3-ը։ 1—3

ԵՐԿՐԱՉԱՓ-ԻՆԺԵՆԵՐ
Ս. ԲԱՀԱԹՐԵԱՆ
Ընդունում է երկչաչափական եւ հարթաչափական (нивеллировочныя) եւ այլ տեսակ գեոդէզիական աշխատութիւններ՝ ջուր մատակարարելու, կանալիզացիայի, առուների, ճահիճներ ցամաքացնելու, անտառների բարեկարգութեան, լեռնային գործի, ճանապարհների եւ փողոցների շինութեան եւ կանոնաւորութեան, քաղաքային եւ այլ անշարժ կալուածքների կարգաւորութեան յատակագծի վրա գրնահատական (оцѣночный сборъ) տուրքի համար, քաղաքային եւ այլ հողերի որոշումը, քաղաքային յատակագծի հատատելը օդէնագրական կարգով եւ այլն։
ԲԱԳՈՒ, «Դիվորցովայա Նովէրներ» հիւրանոց. կամ Թիֆլիս՝ Ավճալեան փողոց, Շահրուզաշեանի տուն, № 39, բակում։
42—100

Լոյս տեսան եւ վաճառվում են
ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ
1902 թ.
ՊԱՏԻ եւ ԾՈՑԻ (Շիրակ)
ՕՐԱՑՈՑՑԵՐԸ
Ծոցի օրացոյցը զարդարված է Գ. եպ. Սրուանձտեանի, Գամառ-Քաթիպայի, Գ. Արծրունու եւ Գ. Զանչեանի պատկերներով. ունի բոլորովին նոր հետաքրքրական յաւելուած ամենաօգտակար տեղեկութիւններով, ընդարձակ բժշկարան, հարուստ երգարան եւ նոր, զուարճալի վիճակահան։
Դատի օրացոյցի մէջ կան բարոյական խրատներ եւ ընտիր մտքեր, հայոց եւ եկեղեցական պատմութիւնից հատուածներ, բոլորովին նոր, ծիծաղաշարժ առակներ (մեծ մասամբ անեկդոտ), այլ եւ ժողովրդական առածներ, ժողովրդական երգեր, գիւղական լէլէներ ընտիր բանաստեղծութիւններ, զուարճալի հանելուկներ, շուտասելուկներ, բժշկական, արհեստագիտական եւ այլ օգտակար եւ հնարքիր տեղեկութիւններ։ Տախտակը չքեղ եւ ճաշակով պատրաստված է յայտնի լիտոգրաֆիաւ՝ 15 գոյնով։ Ցանկացողները մասրամասն բովանդակութիւնը տպագրված առանձին թերթով կարող են ստանալ ձրի։
Գները ամեն տեղ ծոցինը—20 կ., պատինը—50 կ., գումարով գնողներին լինում է զիջում։ Դիմել՝ Александрополь. Карапету Апиняцъ կամ Alexandrople, Karapet Apinian (Caucase)։ Ցանկացողները թող շտապեն, որ իր ժամանակին կարողանանք պատուէրները ճշդութեամբ կատարել։
(Ե. չ.) 16—16

Կօնֆէտի եւ Շօկօլադի գործարան
„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ“
ԹԻՖԼԻՍՈՒՄ
Առաջարկում է թարմ կարամել մրգեղէնից, մենդանտ, մարմելատ, պաստիլա, զէֆիր եւ այլն։
Պատուէրներով դիմել գործարան. Պավլովսկայա փողոց, սեփական տուն, տելեֆոն № 362.
Սեփական գործարանական խանութը գտնվում է Մէյդանում, եղբ. Հէջուբեանների տունը, տելեֆոն № 772.
Մեր ապրանքները ծախվում են բոլոր կօլոնիական խանութներում։
Բագուի եւ Բաքուի գաւառի համար ներկայացուցիչ է Նիկ. Սամարչեանց, Միքայէլեան փող., տ. Աշումեանի։
91—100

Дозволено Цензурою, Тифлисъ, 14 Декабря 1901 г.
Электропечатня Груз. Издат. Т—ва. Б.-Ванкская ул.